

## ՏԵՂԵԿԱՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑԿՈՂ ԵՎ ՓՈՓՈԽԿՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### Հոդված 58.1 Քաղաքապետի լիազորությունները կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում

1. Քաղաքապետը կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

- 1) համաքաղաքային կանոններին համապատասխան՝ տալիս է քաղաքի տարածքում տնային կենդանիներ պահելու թույլտվություն և կատարում է դրանց ամենամյա հաշվառում:
- 2) իրականացնում է Երևանի տարածքում պահվող կենդանիների նույնականացման անձնագրերի տրամադրումը և աջակցում է անասնաբուժական գրանցամատյանների աշխատանքների վարմանը:
- 3) կազմակերպում է Երևանի տարածքում թափառող կենդանիների բռնման և ստերջացման աշխատանքները:
- 4) սահմանված կարգով տրամադրում է թույլտվություններ կենդանիների բուժարաններին և կազարաններին:
- 5) սահմանում է Երևանի տարածքում անկաժ կենդանիների դիակների հավաքման, ոչնչացման և թաղման վայրերը՝ սահմանված սանիտարահիգիենիկ կանոններին համապատասխան:

2. Քաղաքապետը «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողության բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

- 1) «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը կանոնակարգող իրավական ակտերի մշակում և իր իրավասության սահմաններում դրանց հաստատում:
- 2) օրենքով սահմանված կարգով իրականացնում է վերահսկողություն և ստուգումներ կենդանիների պահման բոլոր վայրերում:
- 3) կենդանի տիրապետողից պահանջում է կենդանի պահելուն առչնվող գանկազած տեղեկատվություն, բազատություններ և փաստաթղթեր:
- 4) կազմում է «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջների խախտումների արձանագրությունները:
- 5) խախտումների մասին եռօրյա ժամկետում տեղեկացնում է իրավապահ մարմիններին, միաժամանակ ձեռնարկում է միջոցներ իրավախախտումը կանխելու համար:

### **Հոդված 96. Վարչական շրջանի ղեկավարի լիազորությունները առևտրի և սպասարկման բնագավառում**

1. Վարչական շրջանի ղեկավարը առևտրի և սպասարկման բնագավառում իրականացնում է հետևյալ լիազորությունները.

1) վարչական շրջանի տարածքում, առևտրի համայնքային կանոններին համապատասխան, տալիս է ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն.

2) վարչական շրջանի տարածքում, սպասարկման գործունեության համաքաղաքային կանոններին համապատասխան, բաղնիքներին, սաունաներին, զվարճանքի օբյեկտներին տալիս է ժամը 23.00-ից հետո աշխատելու թույլտվություն.

3) վարչական շրջանի տարածքում, հանրային սննդի համայնքային կանոններին համապատասխան, տալիս է հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն:

4) վարչական շրջանի տարածքում, համաքաղաքային կանոններին համապատասխան, տալիս է կենդանիների վաճառքի թույլտվություն.

**5) վարչական շրջանի տարածքում տալիս է կենդանիների մասնակցությամբ միջոցառումների, ցուցադրությունների, մրցույթների կազմակերպման թույլտվություն:**